ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՎԱՐԿ No. 9389-ԱՄ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Նախադպրոցական կրթական միկրոծրագրերի իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատում և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն

ՀՐԱՎԵՐ No. AF EIP CQS-1.1.4-R

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային Բանկին 22,600,000 եվրոյի չափով ֆինանսավորում ստանալու նպատակով՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Խորհրդատվական ծառայությունները («Ծառայություններ») ներառում են՝ Նախադպրոցական կրթական միկրոծրագրերի իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատման և դրա վրա ազդող գործոնների հետազոտության ծառայությունները:

Սույն առաջադրանքի մանրամասն տեխնիկական առաջադրանքը կցված է հետաքրքրության հայտերի ներկայացման սույն հրավերին (Հավելված 1):

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը հրավիրում է բոլոր իրավասու խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու իրենց հետաքրքրվածությունը վերոնշյալ ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն այն մասին, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձառություն ծառայությունները մատուցելու համար:

Կարճ ցանկում ընդգրկվելու չափանիշներն են.

- **Կազմակերպության ընդհանուր փորձառությունը՝**
  - քանակական/որակական հետազոտություն իրականացնելու առնվազն 5 տարվա փորձառություն (կրթական ոլորտում կատարված հետազոտությունը կդիտվի որպես առավելություն):

- **Կազմակերպության հատուկ փորձառությունը՝**
  - Վերջին հինգ տարիների ընթացքում գնահատող հետազոտություն իրականացնելու առնվազն երկու պայմանագրի առկայություն (պայմանագրերն ընդունելի են, եթե վերջիններով սահմանված ծառայություններն ավարտվել են վերջին հինգ տարիների ընթացքում):

Կարճ ցանկի կազմման փուլում հիմնական մասնագետների որակավորումը չի գնահատվում:

Հետաքրքրված Խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի՝ Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ) փաստաթղթի 3-րդ բաժնի 3.14, 3.16 և 3.17 պարագրաֆների վրա, որոնցով սահմանվում է Համաշխարհային Բանկի շահերի բախման վերաբերյալ քաղաքականությունը:

Խորհրդատուները կարող են համագործակցել այլ կազմակերպությունների հետ՝ իրենց որակավորման բարձրացման նպատակով, սակայն պետք է հստակ նշեն, թե նման համագործակցությունը իրականացվում է համատեղ գործունեության, թե գործակալության/ենթախորհրդատուի պայմանագրի միջոցով: Համատեղ գործունեության դեպքում, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, բոլոր գործընկերները համապարտ պատասխանատվություն են կրում ամբողջ պայմանագրի կատարման համար:

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Գնումների Կանոնակարգերի՝ Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրության մեթոդով /CQS/:

Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, աշխատանքային ժամերի ընթացքում՝ 09:00-18:00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր՝ ուղարկելով հետևյալ հասցեին (առձեռն, փոստով կամ էլ. փոստով) մինչև **17.01.2024թ**., ժամը՝ 16:00 տեղական ժամանակով:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ

Տնօրենի պաշտոնակատար՝ Գրիշա Հովհաննիսյան
Ս. Վրացյան 73, Երևան 0070, ՀՀ
Հեռ. (+374) 57-56-90 (30)
E-mail: info@cfep.am
Կայքի հասցե՝ www.cfep.am

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»

ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ (ԿԲԾ ԼՖ)

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԴՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի հետ ստորագրել է ֆինանսավորման վարկային համաձայնագիր ի աջակցություն «Կրթության բարելավում» ծրագրի (ԿԲԾ) իրականացմանը: Ծրագիրը հաջողությամբ ավարտվել է 2022 թվականի ապրիլին: Միևնույն ժամանակ, Հայաստանի կառավարությունը դիմել և ստացել է ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (ԼՖ): Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2022 թվականի հունիսի 9-ին ստորագրվել է թիվ 9389-AM վարկային համաձայնագիրը:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ԿԲԾ-ի հիմնական խնդիրներն են՝ բարելավել տարրական դպրոց մուտք գործող երեխաների դպրոցական պատրաստվածությունը, բարելավել հանրակրթական դպրոցների ֆիզիկական պայմանները, ապահովել դրանցում կրթական ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև աջակցել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակն ու համապատասխանությունը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաղադրիչներից.

Բաղադրիչ 1: Հանրակրթության որակի բարելավում, որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

- Ենթաբաղադրիչ 1.1: Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,

- Ենթաբաղադրիչ 1.2: Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը,
- Ենթաբաղադրիչ 1.3: Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում,
- Ենթաբաղադրիչ 1.5: Հանրակրթական դպրոցների վերազինում:

Բաղադրիչ 2: Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

Բաղադրիչ 3: Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

ԿԲԾ ԼՖ-ն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող «Կրթական Ծրագրերի Կենտրոն» Ծրագրերի Իրականացման Գրասենյակի (ԿԾԿ ԾԻԳ) կողմից: ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու է ԼՖ-ով Ծրագրի իրականացման կառավարման, ինչպես նաև գնումների, վճարումների, երաշխիքների կիրառման, մոնիտորինգի և գնահատման համար:

Նախադպրոցական կրթության մատչելիությունը ՀՀ կառավարության առանցքային գերակայություններից է: Նախադպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների առաջնահերթ ուղղություններն են՝ օրենսդրական դաշտի, կառավարման համակարգի կատարելագործումը, տեխնիկակրթական բազաների բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության բարձրացումը, անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը: Ծրագիրը միտված է երեխաներին նախապատրաստել տարրական դպրոց մուտք գործելուն՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ, ինչպես նաև մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը:

2015-2022թթ ընթացքում «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում ստեղծվել և ներկայումս գործում են 136 նախակրթարաններ, որոնց 93 տոկոսը տեղակայված է մարզերում (հիմնականում գյուղական համայնքներում): Նախակրթարանների գերակշիռ մեծամասնությունը՝ 128 նախակրթարան ստեղծվել են դպրոցների հենքի վրա, իսկ մնացած 8-ը՝ մանկապարտեզների: Վերապատրաստվել է նորաստեղծ նախակրթարաններում ընդգրկված 258 դաստիարակ: ԿԲԾ-ի շրջանակներում հաստատություններին տրամադրած դրամաշնորհների միջոցով իրականացվել են բարեկարգման աշխատանքներ, ձեռք են բերվել գույք, մեթոդական և ուսումնաօժանդակ նյութեր և այլն: Ծրագրում ընդգրկված բոլոր նախակրթարանները համալրվել են նոր կահույքով, ուսումնական և

կրթական նյութերով: Նոր ստեղծված նախակրթարանների խմբասենյակները ապահովում են համապատասխան միջավայր երեխաների ազատ և դինամիկ զարգացման համար, ինչպես նաև խթանում երեխաների իմացական, ֆիզիկական և ստեղծագործական ունակությունները:

2015-2020 թվականների ընթացքում ստեղծված նախակրթարանները միայն իրենց գործարկման առաջին տարում ներգրավել են ընդհանուր առմամբ 3462 երեխա՝ նախատեսված 3450-ի փոխարեն: Բացի դրանից՝ 2015-ից մինչև 2020 թվականը ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է շուրջ 13580 երեխա, որը կազմել է ամեն տարի տարրական դասարան հաճախող երեխաների թվի 5-6 տոկոսը: Ծրագրում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների մոտ բարելավվել է վաղ զարգացման գործակիցը (ՎԶԳ): Ծրագրի ընթացքում իրականացված հետազոտության արդյունքները փաստում են, որ ծրագրում ընդգրկված երեխաները ձեռք են բերել ինքնուրույնություն, ինչպես նաև ստեղծագործական, համագործակցային և թիմային աշխատանքների ունակություններ, որը ապահովում է նրանց պատրաստվածությունը դպրոցին:

Իրականացվել է ծրագրի մոնիտորիգ և գնահատում: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագիրը համարվում է հաջողված՝ իր նպատակների, խնդիրների և ակնկալվող արդյունքների տեսանկյունից:

ԿԲԾ ԼՖ ծրագրի շրջանակներում նույնպես նախատեսվում է մատչելի և կայուն նախադպրոցական կրթական ծառայությունների ստեղծում ՀՀ 80 համայնքներում:

2. ՆՊԱՏԱԿ

Սույն առաջադրանքի նպատակն է ծրագրի շրջանակներում իրականացնել **հետազոտություն**՝ գնահատելու նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների դպրոցական պատրաստվածությունը և ուսումնասիրելու նախադպրոցական կրթության որակի վրա ազդող գործոնները Վաղ Զարգացման Գործիքի (ՎԶԳ) կիրառմամբ (յուրաքանչյուր տարի՝ ըստ մարզերի և միկրոծրոգրերի իրականացման գործընթացի), ինչպես նաև վերլուծել ներդրումների/միջամտությունների տեսակները, որոնք առավել կարևոր էին ծրագրի իրականացման առաջին փուլում հաջող արդյունքների հասնելու համար:

Հետազոտության շրջանակը բաժանվում է երկու պայմանական մասի.

- Առաջինը՝ միկրոծրագրերում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող գործոններ, որոնք իրենց մեջ ներառում են դասավանդման և ուսուցողական միջավայր, գույքի, սարքավորումների, ուսումնական ծրագրերի արդյունավետ օգտագործում և այլն: Հետազոտության այս մասը կիրականացվի հետազոտության սկզբում և այդ հարցերում հաստատության ձեռք բերած առաջընթացը կամրագրվի հետազոտության վերջում: Այս գործոնների ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել միկրոծրագրերի արդյունավետությունը ինչպես միկրոծրագրերում ընդգրկված (թիրախային խումբ) երեխաների վրա՝ համեմատած այլ նախադպրոցական ծրագրերում ընդգրկված երեխաների հետ (համեմատական խումբ) այնպես էլ չընդգրկված (ստուգիչ խումբ) երեխաների համար:
- Երկրորդը՝ միկրոծրագրերում ընդգրկված և չընդգրկված երեխաների պատրաստվածությունը դպրոցին՝ կիրառելով վաղ մանկության զարգացման գործիքները, որը կներառի երեխաների սոցիալ-հոգեբանական՝ շարժողական, հուզական, անձնային և սոցիալական, իմացական զարգացման դինամիկան, բանավոր խոսքի ընկալման, սովորելու նկատմամբ վերաբերմունքի ձևավորման, ինքնասպասարկման և անվտանգության, խոսքի զարգացման դինամիկան: Հետազոտության այս մասը կիրականացվի երկու անգամ՝ միկրոծրագրերի իրականացման սկզբում և ուսումնական տարվա ավարտին: Կուսումնասիրվեն երեխաների 3 խումբ՝ **թիրախային խումբ** (միկրոծրագրում ընդգրկված երեխաներ), **համեմատական խումբ** (նախադպրոցական այլ ծրագրերում ընդգրկված երեխաներ) և **ստուգիչ խումբ** (միկրոծրագրում չընդգրված երեխաներ), որոնք կգնահատվեն ինչպես միկրոծրագրի իրականացման սկզբում այնպես էլ ծրագրի ավարտին:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

Առաջադրանքի շրջանակում կազմակերպությունը պետք է.

1. Ծանոթանա անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերին, որոնք վերաբերում են վերոնշյալ հարցերին, այդ թվում այս ոլորտում արդեն իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող աշխատանքների հետ:

2. Մշակի հետազոտության մեթոդոլոգիան, հաշվի առնելով, որ երեխաների զարգացման դինամիկայի գնահատումը պետք է ներառի հետևյալ 3 թիրախային խմբերի համեմատական վերլուծությունը.

- երեխաներ, որոնք ընդգրկված են ՀԲ-ի աջակցությամբ իրականացված նախադպրոցական միկրոծրագրերում;
- երեխաներ, որոնք ընդգրկված են առանց ՀԲ աջակցության իրականացված նախադպրոցական միկրոծրագրերում;
- երեխաներ, որոնք ընդգրկված չեն նախադպրոցական միկրոծրագրերում:

Այդ վերլուծությունը պետք է կիրառվի երեխաների նկատմամբ առանձին մոտեցումով՝ հաշվի առնելով նրանց սեռը, տարիքային և անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, ֆիզիկական կարողությունները: Ըստ անհրաժեշտության՝ համեմատական վերլուծությունը պետք է ընդգրկի ինչպես քանակական, այդպես էլ որակական հետազոտությունները և պետք է հետևի տրիանգուլյացիայի և գործոնների հավասարակշռման ընթացակարգերին: :

3. Գնահատման համար անհրաժեշտ հետազոտական գործիքները և ցուցանիշները մշակելիս բացահայտի երեխայի զարգացման դինամիկան հետևյալ ոլորտներում՝ իմացական; ինքնասպասարկման և առողջ ապրելակերպի; խոսքի և հաղորդակցական, սոցիալ-անձնային և հուզական, շարժողական:

- Իմացական ոլորտ՝ երեխան կարողանում է համեմատել, ուսումնասիրել երևույթներ և առարկաներ, գտնել տարբեր խնդիրների լուծումներ, գտնել օրինաչափություններ, ունի մաթեմատիկական ունակություններ, չափի և ձևի պատկերացումներ, կարողանում է կողմնորոշվել հեռավորության և ժամանակի մեջ, ցուցաբերում է տեսողական մտածողություն, կարողանում է իրականությունը երևակայությունից տարբերել, ըմբռնումներ ունի շրջակա միջավայրի և բնության երաժշտական գործիքների, կրոնական և ազգային տոների, պետական խորհրդանիշների վերաբերյալ, կատարում է մանկական երգեր, պարում է, գիտի հեքիաթներ, հանելուկներ, ասացվածքներ:
- Ինքնասպասարկման և առողջ ապրելակերպի ոլորտ՝ երեխան դրսևորում է ինքնասպասարկման հմտություններ, ինքնուրույն պահպանում է անձնական հիգիենայի կանոնները, ունի տարրական պատկերացումներ առողջ սննդակարգի, հանգստի վերաբերյալ, դրսևորում է ֆիզիկական ակտիվության կարողություններ, ներկայացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգները, դրանց հաղթահարման

ուղիներն ու միջոցները, ունի տարրական գիտելիքներ աղետների և դրանց հետևանքների մասին, բացատրում է շրջակա միջավայրին խնամքով վերաբերվելու անհրաժեշտությունը, հասկանում է բժշկի մոտ այցի անհրաժեշտությունը, ունի պարզ պատկերացումներ համավարակների և դրանցից պաշտպանվելու մասին:

- Լեզվի և հաղորդակցման ոլորտ՝ երեխան ունի տարիքին համապատասխան բառապաշար, հորինում և կապակցված ներկայացնում է փոքրիկ պատմություններ, ընկալում է ներկայացված պատմության կառուցվածքը՝ տարբերելով սկիզբը, ընթացքը և ավարտը, տրված բառում տարբերում է առանձին հնչյուններ, ընկալում է բառի վանկերը, ճանաչում է հայերենի տառերը, արտաբերում ձայնավոր և բաղաձայն հնչյունները:
- Սոցիալ-անձնային և հուզական ոլորտ՝ երեխան արտահայտում է իր հույզերն ու զգացմունքները բառերով, հասկանում և ընդունում է ընկերների հույզերն ու զգացմունքները, կառուցում է փոխվստահելի, գործընկերային հարաբերություններ մեծահասակների և հասակակիցների հետ, պահպանում է բարեվարքության կանոնները:
- Շարժողական ոլորտ՝ երեխան կարողանում է ճիշտ կատարել հիմնական շարժողական գործողությունները (քայլք, վազք, ցատկեր, նետումներ, մագլցում, սողանցում) տարբեր պայմաններում, ինքնուրույն կատարում է ընդհանուր զարգացնող վարժություններ, ֆիզիկական ակտիվության բոլոր ձևերում դրսևորում է կարգապահություն, աշխատասիրություն, ազնվություն, ընկերասիրություն, փոխօգնություն, կամք, պատասխանատվություն, նախաձեռնություն, վճռականություն, պատկերացում ունի օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների և սպորտի դրական ներգործության մասին:

Հետազոտության այս մասը կիրականացվի երկու անգամ՝ միկրոծրագրերի իրականացման սկզբում և ուսումնական տարվա ավարտին: Կուսումնասիրվեն երեխաների երեք խումբ.

- ՀԲ աջակցությամբ իրականացված միկրոծրագրերում ընդգրկված երեխաների խումբը՝ թիրախային խումբ;
- առանց ՀԲ աջակցության իրականացված միկրոծրագրերում ընդգրկված երեխաների խումբը՝ համեմատական խումբ; և
- միկրոծրագրում չընդգրված երեխաների խումբը՝ ստուգիչ խումբ, որոնք բոլորն էլ կգնահատվեն միկրոծրագրի իրականացման սկզբում և ուսումնական տարվա ավարտին:

4. Բացահայտի միկրոծրագրերում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող այլ գործոններ, որոնք ներառում են դասավանդման և ուսուցողական միջավայր, գույքի, սարքավորումների, ուսումնական ծրագրերի արդյունավետ օգտագործում, կադրերի պատրաստվածություն, ծնողների մասնակցություն և այլն:

Ուսումնասիրի հաստաությունում սարքավորումների, կահույքի, ուսումնական նյութերի, խաղալիքների և դիդակտիկ միջոցների առկայությունը և դրանց ուսումնական պարապմունքներին օգտագործման հաճախականությունը, երեխաների ազատ ժամանցի կազմակերպման արդյունավետությունը: Առարկայական- զարգացնող միջավայրը պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ պահանջներին և չափորոշիչներին: Խմբասենյակների դիզայնը կարող է լինել տարբեր՝ կախված հաստատության հնարավորություններից և պայմաններից, սակայն միջավայրը պետք է համապատասխանի երեխաների սոցիալական զարգացման կարիքներին:

Հետազոտության այս մասը կիրականացվի միկրոծրագրերի իրականացման սկզբում և այդ հարցերի առաջընթացը/փոփոխությունը կամրագրվի հետազոտության վերջում:

5. Ուսումնասիրության մեթոդոլոգիան, հետազոտության գործիքները ինչպես նաև այցելությունների ժամանակացույցը նախապես համաձայնեցնի ԿԾԿ-ի ԾԻԳ-ի հետ:

6. Կազմակերպի և իրականացնի հետազոտությունը:

7. Պատրաստի հաշվետվություն դաշտային աշխատանքների յուրաքանչյուր փուլից հետո:

8. ԿԾԿ-ի կողմից ստացված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա պատրաստի վերջնական հաշվետվություն և ներկայացնի ԿԾԿ:

9. Հետազոտության պլանը մշակելիս կազմակերպությունը պետք է հաշվի առնի հետևյալը.

- Նախադպրոցական միկրոծրագրեր կիրականացվեն ՀՀ տարբեր մարզերում, և մինչ վարկային ծրագրի ավարտը միկրոծրագրեր իրականացնող հաստատությունների թիվը կլինի շուրջ 80:
- Նախադպրոցական միկրոծրագրեր կիրականացվեն ըստ փուլերի.
  2023/2024 ուս. տարվա համար՝ 29, իսկ 2024/2025 ուս. տարվա համար շուրջ 51 միկրոծրագիր:

- Ամբողջական հետազոտությունը պետք է ընդգրկի ծրագրում ներգրավված բոլոր մարզերը և ընտրանքային կարգով ընդգրկի տվյալ փուլում յուրաքանչյուր մարզում հիմնված նախակրթարանների առնվազն 30%-ը:

4. Համագործակցության շրջանակը

Կազմակերպությունը պետք է սերտ աշխատի նշված շահառուների հետ.

- Կրթության և գիտության նախարարություն /ԿԳՆ/
- Կրթական Ծրագրերի Կենտրոնի /ԿԾԿ/
- Միկրոծրագրեր իրականացնող հաստատություններ
- Միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների ծնողներ
- Մարզային կրթության վարչություններ
- Համայնքներ

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Սկզբնական հաշվետվություն, որը կներառի հետազոտության մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, ընտրանքի ձևավորումը, հարցաթերթիկների նմուշ-օրինակներ, հետազոտության գործիքներն ու ցուցիչների հավաքածուն:
- Առաջին հաշվետվություն, որը կընդգրկի հետազոտության տվյալները 2023-2024 ուսումնական տարվա համար:
- Երկրորդ հաշվետվություն, որը կընդգրկի հետազոտության տվյալները 2024-2025 ուսումնական տարվա համար:
- Վերջնական հաշվետվություն, որը կամփոփի 2023-2025թթ. իրականացված հետազոտությունների արդյունքները:

6. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄՆԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>Առաջին փուլ</u> <u>(պայմանագրի կնքումից 1 ամիս հետո)</u>:

Այս փուլում կազմակերպությունը պետք է.

- Ծանոթանա անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերի հետ, որոնք վերաբերում են վերոնշյալ հարցերին, այդ թվում այս ոլորտում արդեն իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող աշխատանքների հետ:
- Մշակի ուսումնասիրության մեթոդոլոգիան:
- Մշակի հարցաթերթիկներ, հետազոտության գործիքներ, սահմանի երեխաների երեք թիրախային խմբերը (ըստ սեռերի):
- Մշակված ուսումնասիրության մեթոդոլոգիան, հարցաթերթիկների նմուշ-օրինակները և հետազոտման գործիքները ներկայացնի ԿԾԿ ԾԻԳ-ի դիտարկմանը:

<u>Երկրորդ փուլ</u> -առաջին փուլի ավարտից անմիջապես հետո (ժամկետը կհստակեցվի պայմանագրի կնքման փուլում) մինչև 2024թ. հուլիս:

Այս փուլում կազմակերպությունը պետք է.

- Իրականացնի դաշտային աշխատանքներ 2023թ.-ին հիմնված նախակրթարաններում՝ ուսումնական գործընթացի սկզբնական փուլում և ավարտին:
- Ներկայացնի հաշվետվություն՝ ուսումնասիրության աշխատանքներից հետո, որը կներառի դաշտային աշխատանքների նկարագրությունը, թիրախային և ստուգիչ խմբերի համեմատական վերլուծությունը այդ տարվա միկրոծրագրերում ընդգրկված (ՀԲ աջակցությամբ և առանց ՀԲ աջակցության), և նույն համայնքի չընդգրկված երեխաների զարգացման վերաբերյալ:

<u>Երրորդ փուլ</u> (2024թ. սեպտեմբերից մինչև 2025թ. հուլիս):

Այս փուլում կազմակերպությունը պետք է.

- Իրականացնի դաշտային աշխատանքներ 2024թ.-ին հիմնված նախակրթարաններում՝ ուսումնական գործընթացի սկզբնական փուլում և ավարտին:
- Ներկայացնի հաշվետվություն՝ ուսումնասիրության աշխատանքներից հետո, որը կներառի դաշտային աշխատանքների նկարագրությունը, համեմատական վերլուծություն այդ տարվա միկրոծրագրերում ընդգրկված (ՀԲ աջակցությամբ և առանց ՀԲ աջակցության), և նույն համայնքի չընդգրկված երեխաների զարգացման վերաբերյալ:

<u>Չորրորդ փուլ (2025թ. օգոստոս-սեպտեմբեր):</u>

Այս փուլում կազմակերպությունը պետք է.

- Կազմի վերջանական հաշվետվություն, որը կներառի բոլոր 2023-2025թթ. դաշտային աշխատանքների նկարագրությունը, հավաքագրված տվյալները, արդյունքների ամփոփ վերլուծությունը և առաջարկություններ ԿԾԿ ԾԻԳ-ին:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Առաջին փուլի հաշվետվությունը պետք է ընդգրկի՝ հետազոտության մեթոդաբանություն, հարցաթերթիկների նմուշօրինակներ, հետազոտության գործիքներ՝ փարձարկված և համաձայնեցված ԿԾԿ ԾԻԳ-ի հետ: Հաշվետվությունը պետք է ներկայացվի պայամանագրի կնքումից մեկ ամիս հետո (ժամկետը կհստակեցվի պայմանագրի կնքման փուլում) :
- Երկրորդ փուլի հաշվետվությունը պետք է ընդգրկի 2023 թվականին ընտրված համայնքների միկրոծրագրերի դաշտային աշխատանքների իրականացումը և համեմատական վերլուծության արդյունքները: Հաշվետվությունը պետք է ներկայացվի 2024 թվականի օգոստոսին:
- Երրորդ փուլի հաշվետվությունը պետք է ընդգրկի 2024 թվականին ընտրված համայնքների միկրոծրագրերի դաշտային աշխատանքների իրականացումը և համեմատական վերլուծության արդյունքները: Հաշվետվությունը պետք է ներկայացվի 2025 թվականի օգոստոսին:
- Չորրորդ փուլի հաշվետվությունը պետք է ընդգրկի՝ 2023-2025թթ.-ի ընթացքում իրականացրած աշխատանքների ու հետազոտության արդյունքների ամփոփ վերլուծությունը: Հաշվետվությունը պետք է ներկայացվի 2025թ. հոկտեմբերին:

Կազմակերպությունը պետք է տրամադրի գենդերային տարանջատված տվյալներ ըստ հետևյալ երկու ցուցանիշների.

(i) նախակրթարաններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի աճը ըստ սեռերի (ցուցանիշը պետք է չափվի ինչպես միավորված, այնպես էլ տարանջատված ըստ սեռերի)

(ii) նախակրթարաններում ընդգրկված երեխաների տվյալները ըստ սեռերի:

Բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով: